# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ՍՎԵՐԴԼՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

# 2024-2029



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր մեր կրթական համակարգում զգալի փոփոխություններ են կատարվում: Փոփոխությունները ուղղված են գիտելիքների, հմտությունների, կարողունակությունների ձեռքբերմանը: Մշակվել է կրթության մասին օրենքը, ստեղծվել և ստեղծվում են նոր կրթական ծրագրեր, ուսումնական պլաններ, դասագրքեր: Իրականացվում են ուսուցիչների մասնագիտական և մեթոդական վերապատրաստման դասընթացներ, որպեսզի նրանք պատրաստ լինեն նորացվող փոփոխություններին մեր կրթական համակարգում: Դպրոցը պետք է լինի այն վայրը, որտեղ ձևավորվելու են կյանքի տարբեր մարտահրավերներին դիմակայող, տարբեր իրավիճակներում արագ և գրագետ կողմնորոշվող, կրթությունը կարևորող, հայրենիքը սիրող անհատներ: Անհրաժեշտ է սովորողների մեջ ամրապնդել այն համոզմունքը, որ հասարակության ակտիվ անդամ դառնալու, նորացվող տեխնոլոգիաներից գրագետ օգտվելու հնարավորություն ունենալու համար հարկավոր է սովորել: Ուստի առողջ հասարակության հիմքը սկսվում է դպրոցից: Կրթական գործընթացում շատ կարևոր է ստեղծահործական մտածողություն ունեցող, նախաձեռնող մանկավարժների և սովորողների դերը արդի աշխարհում համակողմանի զարգացած և արհեստավարժ լինելու համար:

*Ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը կազմվել է ըստ՝*

**ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 18.04.2023թ. N 399-Ա հրամանի պահանջների**

**«ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագծի**

**ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները» N 35-Ն հրամանի**

**ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի**

**ՀՀ « Կրթության մասին» օրենքի**

ՀՀ Սահմանադրության

Օրենքով սահմանված կարգով նորմատիվ իրավական ակտերի

Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկի

ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության

Սվերդլովի միջնակարգ դպրոցի՝ վերջին հինգ տարիների ներքին գնահատման ցուցանիշների,

Սվերդլովի միջնակարգ դպրոցի մանկավարժական, ծնողական, աշակերտական, խորհուրդների հետ հանդիպումների ժամանակ ներկայացված առաջարկությունների և կարծիքների։

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՎԵՐԴԼՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Սվերդլովի միջնակարգ դպրոցն ունի շուրջ մեկուկես հարյուրամյակի պատմություն: Մասնավորապես 1878 թ. գյուղում (մինչև 1940 թ. այն անվանվում էր Հայդարբեկ) գործել է ծխական դպրոց՝ 30 աշակերտով, որը որոշ ժամանակ անց փակվել է: 1884 թ. Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի առաջնորդ Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանի ջանքերով դպրոցը վերաբացվել է: Հաջորդ տարիներին ևս գյուղի դպրոցը գործել է ընդհատումներով: 1905 թ. այն կրկին վերաբացվել է: Դպրոցը գործել է նաև Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում. 1919-1920 ուսումնական տարում այն ուներ 1 ուսուցիչ, 80 աշակերտ, որոնք սովորում էին 1-3-րդ դասարաններում: Այդ ժամանակ դպրոցը սեփական շենք չուներ, գործում էր վարձակալված շենքում:

Սվերդլովում դպրոցական գործն առավել կազմակերպված հիմքերի վրա դրվեց խորհրդային տարիներին: Մինչև 1934 թ. դպրոցը եղել է տարրական, ապա դարձել է

յոթնամյա: 1949 թ. դպրոցն ունեցել է 12 դասարան, 367 աշակերտ: Բոլոր դասարանները եղել են հայկական: 1958 թ. դպրոցը դարձել է միջնակարգ, իսկ 1959 թ. ունեցել է 22 շրջանավարտներ:

Հիմնադրման օրից դպրոցի շենքը գտնվել է գյուղի արևմտյան մասում, ունեցել է դեկորատիվ այգի, լողավազան, գրադարան-ընթերցասրահ՝ հարուստ գրականությամբ: 1987 թ. շահագործման է հանձնվել դպրոցի նոր շենքը: 1988 թ. դեկտեմբերի ավերիչ երկրաշարժը վնասել է նաև դպրոցի շենքը: Մինչև 1991 թ. դասերը ժամանակավորապես կազմակերպվել են տնակներում: 1989-1991 թթ. դպրոցի շենքը մասնակի վերանորոգվել է և դասերը վերսկսվել են այդտեղ: Դպրոցի երեք մասնաշենքից այժմ օգտագործվում է միայն երկուսը: 2012 թվականից դպրոցում գործում է նախակրթարան:

Պաշտոնական կայք-Sverdlov.schoolsite.am

Սոցիալական հարթակ- Fb Սվերդլովի միջնակարգ դպրոց

Էլեկտրոնային hասցե-Sverdlov@schools.am

*Ըստ հաստատված լիցենզիաների դպրոցն իրականացնում է՝*

1-ին աստիճանի՝ տարրական կրթական ծրագիր՝ առկա ուսուցմամբ

2-րդ աստիճանի՝ հիմնական կրթական ծրագիր՝ առկա ուսուցմամբ

3-րդ աստիճանի՝ միջնակարգ կրթական ծրագիր՝ առկա ուսուցմամբ

Նախադպրոցական կրթական ծրագի


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԼԻՑԵՆԶԻԱ
ՏԱՐՐԱԿԱՆ հանրակրթական
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՍԵՐԻԱ Ա № 0335
Սույնով վավերացվում է, որ
«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՎԵՐԴԼՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
Լոռու մարզ, գ. Սվերդլով
Լոռու մարզ, գ. Սվերդլով
Իրավունք ունի իրականացնելու
Տարրական հանրակրթական
հանրակրթական ծրագիր
ՆԱԽԱՐԱՐ Ա. Աշոտյան
Կ.Տ. «15» հուլիսի 2011 թ.
Անժամկետ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԼԻՑԵՆԶԻԱ
ՀԻՄՆԱԿԱՆ հանրակրթական
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՍԵՐԻԱ Ա № 0330
Սույնով վավերացվում է, որ
«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՎԵՐԴԼՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
Լոռու մարզ, գ. Սվերդլով
Լոռու մարզ, գ. Սվերդլով
Իրավունք ունի իրականացնելու
Հիմնական հանրակրթական
հանրակրթական ծրագիր
ՆԱԽԱՐԱՐ Ա. Աշոտյան
Կ.Տ. «15» հուլիսի 2011 թ.
Անժամկետ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԼԻՑԵՆԶԻԱ
ՄԻՋՆԱԿԱՐԳ հանրակրթական
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՍԵՐԻԱ Ա № 0271
Սույնով վավերացվում է, որ
«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՎԵՐԴԼՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
Լոռու մարզ, գ. Սվերդլով
Լոռու մարզ, գ. Սվերդլով
Իրավունք ունի իրականացնելու
Միջնակարգ հանրակրթական
հանրակրթական ծրագիր
ՆԱԽԱՐԱՐ Ա. Աշոտյան
Կ.Տ. «15» հուլիսի 2011 թ.
Անժամկետ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՍԵՐԻԱ Ա
ԼԻՑԵՆԶԻԱ № 0531
Սույնով վավերացվում է, որ
<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՎԵՐԴԼՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ
ՀՀ Լոռու մարզ, համայնք Լոռի Բերդ, գյուղ Սվերդլով
ՀՀ Լոռու մարզ, համայնք Լոռի Բերդ, գյուղ Սվերդլով
Իրավունք ունի իրականացնելու
Նախադպրոցական կրթական ծրագիր
ՆԱԽԱՐԱՐ Ա. Հարությունյան
Կ.Տ. «26» հոկտեմբերի 2018 թ.
Անժամկետ

*2019-2024 ուսումնական տարիների ընթացքում կատարած աշխատանքների միջոցով գրանցած առաջընթացների մասին համառոտ տեղեկություններ:*

Դպրոցի տնտեսված գումարներով վերջին 5 տարիների ընթացքում կատարվել է տարաբնույթ աշխատանքներ: Նորոգվել են միջանցքները, հատակը սալիկապատվել է: Հանդիսությունների դահլիճը մասամբ վերանորոգվել է հատակը սալիկապատվել է: Մարզադահլիճի դուռը և պատուհանները փոխարինվել են նորով: Վերանորոգվել է ՄԿԱ գծով փոխտնօրենի առանձնասենյակը:

2021թ հիմնանորոգվել է դպրոցում գործող ճաշարանը ՄԱԿ-ի պարենի համաշխարհային «Դպրոցական սնունդ» ծրագրի աջակցությամբ: Դռները և

պատուհանները փոխարինվել են նորով, հատակը սալիկապատվել է: Ձեռք է բերվել անհրաժեշտ խոհանոցային գույք:

Ձեռք է բերվել թվով 7 նոութբուք համակարգիչներ:

Բարեկարգվել է նոր գրադարանի տարածքը:

2023թ. Տաշիր +տախի մրցույթային դրամաշնորհում դպրոցը շահել է դրամաշնորհ: Ձեռք է բերվել մարզագույք, բարեկարգվել է ֆուտբոլի և վոլեյբոլի դաշտերը:

2023թ. «Արգինա» մշակութային հասարակական կազմակերպությունը «Դպրոցական ագրո-էկո կենտրոնների ցանցի ստեղծում» ծրագրի շրջանակներում Սվերդլովի միջնակարգ դպրոցին նվիրաբերել է մեկ հատ ջերմոց դպրոցական ագրո-էկո կենտրոնի ստեղծման, կենտրոնում ուսումնա-փորձնական աշխատանքներ կատարելու, տնկիներ աճեցնելու նպատակով:

2020 թ-ից դպրոցում գործում է աղջիկների և տղաների ֆուտբոլային թիմեր: 2024թ դրությամբ 14 աղջիկներ «Սվերդլով» գոլս թիմի անվանումով հանդես են գալիս տարբեր մրցաշարերի: Մասնակցում են Մ-13 հայաստանի ֆուտբոլի աղջիկների առաջնությանը: Երևանում Ավանի ֆուտբոլային ակադեմիայում կայացած մրցաշարում 2022թ գրավել են երրորդ մրցակցային տեղը, պարգևատրվել են գավաթով և մեդալներով: Թիմի մարզիչը դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ Արա Մուրադյանն է ով նաև ղեկավարում է տղաների ֆուտբոլային թիմերը: Տղաները նույնպես մասնակցում են տարբեր տարիքային մրցաշարերի ունեն զգալի հաջողություններ: Նրանց մրցաշարերը կազմակերպվում է նաև ՀՀ ից դուրս:

2022-2023 ուսումնական տարում դպրոցի ուսուցչուհի Աննա Մազթաղյանը Մասնակցել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից կազմակերպված «Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի» նախագծին: Այդ փորձը իր ներդրումն ունեցավ նաև դպրոցում՝ ՀՊՉ-ով նախատեսված նախագծային աշխատանք իրականացնելիս: 7-րդ դասարանում անցկացվեց «Կլիմայի գլոբալ փոփոխության հիմնախնդիրները» վերնագրով նախագծային աշխատանք:

Դպրոցում կազմակերպվել են համադպրոցական տարբեր միջոցառումներ « Հայոց բանակ», «Երեխաների իրավունքներ», «Բնական աղետները գլոբալ հիմնախնդիր»,

«Աշնան գույների մեջ», «Սասնա Ծռեր», «Այբբենարանի տոն», «Հայաստանս երգերի մեջ», «Հայաստանի երրորդ Հանրապետությունը» խորագրերով: Դե իսկ «Եղիր գրագետ և պաշտպանված թվային միջավայրում» մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբերգրագիտության կարողությունների զարգացման նախագծի շրջանակներում դպրոցի աշակերտները մասնակցելով մրցույթին ստացել են հավաստագրեր:

Վերջում ներկայացված են նկարները:

Աշխատողներ՝ 35

Կազմակերպա-իրավական տեսակը՝ ՊՈԱԿ

Իրավաբանական տեսակը՝ Պետական ոչ առևտրային կազմակերպություն

Տնօրեն՝ Արմեն Ղուկասյան

Դպրոցի ստեղծման տարեթիվը՝ 1987

Դպրոցի մուտքերի թիվը 5

*մասնագիտական դասասենյակների մասին տեղեկություն*

Առկա է ՆԶՊ- դասասենյակ, որտեղ նաև անց են կացվում շախմատի դասերը:

Առկա է ինֆորմատիկայի դասասենյակ, որտեղ նաև անց են կացվում «Արմաթ» լաբորատորիայի դասերը: Դասասենյակում առկա է համակարգիչներ և ինտերնետային կապ:

Դպրոցում սոց մանկավարժի և հոգեբանի աջակցությունները տրամադրվում է Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից: Ամեն ուրբաթ դասերից հետո այցելում են դպրոց: Հարկ եղած դեպքում կազմակերպվում է հեռավար կրթություն:

Շարունակական վերապատրաստում և ատեստավորում անցած ուսուցիչների մասին տեղեկություններ՝

2020-2021 4 ուսուցիչ է վերապատրաստվել

2021-2022 8 ուսուցիչ է վերապատրաստվել

2022-2023 5 ուսուցիչ է վերապատրաստվել

Կամավոր ատեստավորում անցած և դրույքաչափի բարձրացումով ունենք 3 ուսուցիչ, որից մեկը միջին մասնագիտական կրթությամբ։

Դպրոցի շենքի տիպը՝ Տիպային

Հարկայնությունը՝ 2

Ջեռուցման եղանակը՝ Լոկալ

Առանձնասենյակների թիվը՝ 6

Դասասենյակների թիվը՝ 14

Լաբորատորիա՝ Չկա

Առարկայական սենյակ /կաբինետ՝

Նախնական զինպատրաստության՝ Առկա է 1 կաբինետ, կցված է շախմատի դասասենյակին

Հրաձգարան՝ - Չկա

Համակարգչային կաբինետ՝ Առկա է 1 կաբինետ

Ինտերնետ կապի առկայությունը՝ դպրոցում առկա է 2 կապ

Բացօթյա սպորտհրապարակ՝ Առկա է

Մարզադահլիճ՝ Առկա է 1։

Հանդիսությունների դահլիճ- Առկա է 1

Արհեստանոցներ՝ Չկա

Բուժկետ՝ Չկա

Ճաշարան՝ Առկա է

Հանդերձարան (ներ)՝ Չկա

Զուգարան (ներ)՝ առկա է 6 զուգարան, որից 5 -ը ներքևի հարկում, մեկը 2-րդ հարկում

Տեխնիկական նշանակության այլ սենյակներ՝ առկա են 4

Մարզահրապարակ(ներ)՝ Չկա

Համակարգիչներ՝ 14

Համակարգչային այլ տեխնիկա՝ 1

Հեռախոսներ՝ Չկա

Գրադարան (ներ)՝ Առկա է 1

Գրադարանի ֆոնդը՝ 1190

Աշխատողների թիվը՝ 1 աշխատող գրադարանում

Վարչական աշխատողների քանակը՝ 3

Դասարանների թիվը՝ 14

Աշակերտների թիվը 2023-2024 ուստարում ըստ կիսամյակների՝

118-սեպտեմբերին

116 –Դեկտեմբերին

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորներ |
|---|---|
| ՎԱՐՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | |
| Տնօրեն | 1 |
| Տնօրենի տեղակալ ուսումնական գծով | 1 |
| ՄԿԱ գծով փոխտնօրեն | 1 |
| Վարչատնտեսական մասի համակարգող | 0 |
| Հաշվապահ | 1 |
| Տնտեսվար | 0 |
| Ընդամենը | 4 |
| ՈՒՍՈՒՄՆԱ-ՕԺԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱԶՄ | |
| Զինղեկ | 1 |
| Քաղպաշտպանություն | 0 |
| Համակարգ. օպերատոր | 1 |
| Գրադարանավար | 1 |
| Դաստ . աշխ. կազմակերպիչ | 1 |
| Հոգեբան | 0 |
| Սոց. մանկավարժ | 0 |
| Ուսուցչի օգնական | 1 |

| | |
|---|---|
| Ընդամենը | 5 |
| ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ | |
| Հավաքարար | 4 |
| Գործավար | 1 |
| Հնոցապահ | 0 |
| Խոհարար | 1 |
| Ընդամենը | 6 |
| Աշխատողների ընդհանուր թիվ | 35 |

Ուսուցիչների տարիքային բաշխվածությունը.

| | 25-29 | 30-39 | 40-49 | 50-59 | 60 և ավելի | ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| 2019-2020 | 7 | 5 | 4 | 6 | 1 | 23 |
| 2020-2021 | 6 | 4 | 3 | 7 | 3 | 23 |
| 2021-2022 | 6 | 4 | 3 | 6 | 4 | 23 |
| 2022-2023 | 1 | 8 | 3 | 5 | 6 | 23 |
| 2023-2024 | 1 | 9 | 3 | 5 | 6 | 24 |

## ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

| Ցուցանիշը | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 | 2023-2024 |
|---|---|---|---|---|

| | Ուստար ի | Ուստար ի | | Ուստար ի |
|---|---|---|---|---|
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ | 127 | 119 | 121 | 118 |
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ | 128 | 117 | 122 | 116 |
| Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը | 1 | 0 | 1 | 0 |
| Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը | 0 | 2 | 0 | 2 |

*Հաստատությունում ներառական կրթության իրականացմանը վերաբերվող չափանիշներ*

| Չափանիշ | Այո | Ոչ |
|---|---|---|
| Ներառական կրթության զարգացումը որպես նպատակ ամրագրված է հաստատության զարգացման ծրագրում | Այո | |
| Հաստատության զարգացման ծրագրում պլանավորված են ներառական կրթության ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումներ, այդ թվում ուսուցիչների վերապատրաստումներ | Այո | |
| Հաստատության տնօրենն ունի ներառական կրթության գործընթացի համակարգման լիազորություններով տեղակալ/կամ այն պատվիրակված է տեղակալներից որևէ մեկին | Այո | |
| Հաստատության վեբ կայքում գործում է ներառական կրթության բաժին՝ ընտանիքի և համայնքի հետ հետադարձ կապի | | *Ոչ* |

| | | |
|---|---|---|
| հնարավորությամբ | | |
| Հաստատությունն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր: | Այո | |
| Վերջին 5 տարում տնօրինությունը մասնակցել է ներառական հաստատությունների կառավարման թեմայով վերապրաստման | Այո | |
| Հաստատությունն ունի ներառական կրթության թեմաներով վերապատրաստված և վերապատրաստող ուսուցիչներ: Վերջին 5 տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը | ԱՅՈ<br>Բոլորն էլ մասնակցել են | |
| Հաստատությունում ամենուրեք (դասասենյակներ, | | *ՈՉ* |

| | | |
|---|---|---|
| դահլիճներ, գրադարաններ և այլն) ապահովված է տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձնաց համար ֆիզիկական մատչելիություն | | |
| Հաստատությունն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմ (հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան, ուսուցչի օգնական և այլն) | | *ՏՄԱԿ ից են այցելում դպրոց* |
| Հաստատությունում առկա են բավարար քանակի և որակի սարքավորումներ և ուսումնամեթոդական նյութեր ֆունկցիաների տարատեսակ սահմանափակումներ ունեցող սովորողների համար | | ՈՉ |
| Հաստատությունում առկա են բավարար քանակի և որակի սարքավորումներ և ուսումնամեթոդական նութեր լսողության և | | *ՈՉ* |

| | | |
|---|---|---|
| տեսողության ֆունկցիայի բացակայություն կամ սահմանափակում ունեցող սովորողների համար | | |
| Դասասենյակների դասավորվածությունն այնպիսին է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները մեկուսացված չեն | Այո | |
| Հաստատությունն ունի ռեսուրս-սենյակ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար | | Ոչ |
| Հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող ֆիզիկական (թեքահարթակ, հենակ և այլն) խոչընդոտները | | Ոչ |
| Հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական (վերաբերմունք, կարծրատիպ) խոչընդոտները | | Ոչ |
| Անհատական ուսումնական | Այո | |

| | | |
|---|---|---|
| պլանները (ԱՈՒՊ) մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը | | |
| Ուսուցիչների թիվը, ովքեր ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ | Չկա հստակ թիվ | |
| Ուսուցիչները գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում են համապատասխան քայլեր | Այո | |
| Ուսուցիչներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սովորողների նկատմամբ, անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ | Այո | |

| | | |
|---|---|---|
| կարիքներից | | |
| Ուսուցիչները կարողանում են հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ, երևույթ դասարանում, դպրոցում, ուսումնական նյութերում, և նույնիսկ սեփական վարքագծում | Այո | |
| Սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերը | Դասագրքերի վարձավճարի փոխհատուցում, տարբեր ծրագրերի մասնակցություն, օրինակ ճամբարներ | |

### *Տվյալներ հաստատությունում սննդի կետի առկայության և սննդի կազմակերպման վերաբերյալ*

| | |
|---|---|
| Հաստատությունում առկա է սննդի կետ, թե ոչ (ընդգծել այո կամ ոչ բառերը) | |
| Այո առկա է | |
| Հաստատության սննդի կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ, թե ոչ (ընդգծել այո կամ ոչ բառերը | |
| Այո փակցված է | |
| Սննդի կետի սանիտարական վիճակը՝ ըստ հակահամաճարակային ծառայության | |

| Սննդի կետի տեսակը (բուֆետ, ճաշարան ) | Միաժամանակ սնվելու հնարավորություն ունեցող անձնաց թիվը և տարածքը (քմ) | Սառը և տաք հոսող ջրի առկայությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը) | Լվացարանի և հիգիենայի պարագաների առկայությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը) | Տաք սննդի հնարավորությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը) | Վերանորոգված է, թե ոչ (ընդգծել այո կամ ոչ բառերը) |
|---|---|---|---|---|---|
| ճաշարան | 32 աշակերտ | Այո | Այո | Այո | Այո |

*Տվյալներ հաստատության ուսումնական լաբորատորիաների, կաբինետների և դահլիճների վերաբերյալ*

| Լաբորատորիաներ, կաբինետներ և դահլիճներ | Տարածքը (քմ) | Վերանորոգման կարիքը |
|---|---|---|
| Ֆիզիկայի լաբորատորիա, կաբինետ | Չկա | |
| Քիմիայի լաբորատորիա, կաբինետ | Չկա | |
| Կենսաբանության լաբորատորիա, կաբինետ | Չկա | |
| Ռազմագիտության Կաբինետ | Կա | Հրաձգարան չկա, |
| Համակարգչային լաբորատորիա, կաբինետ | Կա | Կարիք կա վերանորոգման, համակարգիչները հին |

| | | |
|---|---|---|
| | | են, |

*Տվյալներ հաստատության գրադարանի և դրա գործունեության մասին*

| Ցուցանիշ | Տվյալներ |
|---|---|
| Գրադարանի տարածքը քմ-ով | 35 |
| Գրադարանի ֆոնդում առկա գրքերի քանակը | 1190 |
| Ընթերցասրահի առկայությունը և տարածքը քմ-ով | Չկա ընթերցասրահ |
| Գրադարանի գրապահոցի տարածքը քմ-ով | Չկա |
| Գրադարանում համակարգիչների թիվը | 0 |
| Գրադարանային ֆոնդում առկա գրքերի /բացառել ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագրքերը/ ընդհանուր թիվը, այդ թվում՝ | 821 |
| -գեղարվեստական գրքերի թիվը | 821 |
| -տեղեկատվական գրքերի թիվը /բառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ և այլն/ | 86 |
| -ուսումնամեթոդական գրքերի թիվը | 47 |
| -ամսագրերի թիվը | 0 |
| Ամենից հաճախ գրադարանից վերցվող գրքերը | Ուսումնամեթոդական ձեռնարկներ,գեղարվեստական գրքեր |
| Գրադարանից միջինում ամսեկան օգտվողների թիվը | 15 |

## ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵԼՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ.ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

**ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻՈՐԵՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՄ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԾՆՈՂԱԿԱՆ ԵՎ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ: Կարևորելով նրանց կարծիքը և զարգացման ծրագրում անդրադառնալու նպատակով արձանագրել եմ նրանց առաջարկությունները և առկա խնդիրներին նայել նրանց տեսանկյունից:**

## ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Դպրոցի կառուցման տարեթիվը | 1987 |
| Հողամասի մակերեսը | 2.5 հա |
| Շենքի մակերեսը | 1300քմ |
| Հարկայնությունը | 2 |
| Նկուղի առկայնությունը | 56մք չի օգտագործվում |
| Նախագծային հզորությունը | 392 |
| Սովորողների թիվը<br>Որից ԿԱՊԿՈՒ | 116<br>3 սովորող |
| Կրթական գործունեության լիցենզիաներ | 120 տարրական հանրակրթական<br>170 հիմնական հանրակրթական<br>90 միջնակարգ հանրակրթական |
| ՆՈՒՀ-Ի աշակերտների թիվը | 2023-2024թ 4 աշակերտ |
| Շենքի նկարագիր | Երկհարկանի պանելային շենք T-աձև դասավորված 3 մասնաշենքերով |
| Առկա վիճակը:<br>Տանիքը | Ծպեղային, ազբոշիֆեր: Հիմնանորոգման և ջերմամեկուսացման կարիք ունի |

| | |
|---|---|
| Դռներ և պատուհաններ | Ա և Բ մասնաշենքերում եվրոպատուհաններ և դռներ, վիճակը բավարար |
| Սանհանգույցներ | Բ մասնաշենքում գործում է 5 սանհանգույց, 4-ը առաջին հարկում 1-ը 2-դ հարկում: Վիճակը ոչ բավարար: Նորոգման կարիք կա: |
| Դասասենյակների ներքին հարդարում և վերանորոգում | Դասասենյակները գործում են Ա և Բ մասնաշենքերում: Ներքին հարդարման և վերանորոգման աշխատանքներ իրականացվել են 6 դասասենյակներում, 7 դասասենյակներում վերանորոգման կարիք կա: Միջանցքները հիմնականում նորոգված են, ներքին հարդարման աշխատանքների կարիք կա: Մարզադահլիճի պատերը և առաստաղը նորոգման կարիք ունեն: |
| Դպրոցի Գ մասնաշենքը | Դպրոցի Գ մասնաշենքը 1988թ. երկրաշարժից հետո չի նորոգվել, այժմ չի գործում: Դռները և պատուհանները առկա չեն: Անհրաժեշտ է իրականացնել մասնաշենքի հիմնանորոգում: |
| Ջեռուցում | Լոկալ |
| Գազամատակարարում | Մշտական |
| էլեկտրամատակարարում | Մշտական |
| Ջրամատակարարում | Մշտական, սակայն ձմռանը սառելու հետևանքով խնդիր է առաջանում: Կուտակիչների կարիք կա: |
| Կոյուղի | Նորոգման կարիք ունի |
| | |

*Դպրոցի ենթակառուցվածքներ*

| *Առկա են* | *Առկա չեն* |
|---|---|
| Նախակրթարան<br>Գրադարան | Ռեսուրս դասարան ԿԱՊԿՈՒ սովորողների համար: Դպրոցում չկան ԿԱՊԿՈՒ աշակերտների համար հարմարեցումներ:<br>Ընթերցասրահ |
| ՆԶՊ դասասենյակ կցված Շախմատի  դասասենյակին | Լաբորատորիաներ-քիմիայի, կենսաբանության, ֆիզիկայի աշխարհագրության |
| Ինֆորմատիկայի դասասենյակ: Դասասենյակում է գործում «Արմաթ» լաբորատորիան: | Աշակերտական խորհրդի սենյակ |
| Սպորտդահլիճ<br>Հանդիսությունների դահլիճ | Հրաձգարան |
| Դասասենյակներ<br>Աշխատասենյակներ | Ապաստարան |
| Ճաշարան | Բուժկետ |
| Պահակակետ | |
| Սանհանգույցներ | |

## ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

### ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Ա և Բ մասնաշենքերում

Պատուհաններն ու դռները բավարար վիճակում են,

միջանցքները վերանորոգված են և գտնվում են լավ վիճակում,

հողամասի մակերեսը 2.5 հա է,

դահլիճը վերանորոգված է,

առկա է ՆԶՊ-ին կից շախմատի վերանորոգված դասասենյակ,

գրադարանը հարուստ է ուսումնամեթոդական և գեղարվեստական գրականությամբ,

Ճաշարանը վերանորոգված է

### ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Նկուղը չի օգտագործվում,

Բուժկետ առկա չէ

Սանհանգույցները ոչ բավարար վիճակում են

7 դասասենյակներ գտնվում են ոչ բավարար վիճակում,

Մարզադահլիճի պատերը անմխիթար վիճակում են,

դպրոցի Գ մասնաշենքն անմխիթար վիճակում է

ջրամատակարարումը վերանայման կարիք ունի,

կոյուղին նորոգման կարիք ունի

տանիքը նորոգման կարիք ունի

հաստատությունում հաղթահարված չեն ներառականությունը խաթարող ֆիզիկական խոչընդոտներ

տարածքը կանաչապատ չէ

չկա ցանկապատ

սպորտդահլիճը չունի գույք

ճաշարանում աթոռները հին են ,

տարբեր ,չեն համապատասխանում

երեխաների հասակին

*Դպրոցի առավել թույլ կողմն է դպրոցի տարածքի ցանկապատված չլինելը: Դպրոցի տարածքը անվտանգ չէ երեխաների համար: Հաճախ ավտոմեքենաներ են անցնում դպրոցի տարածքով խոչընդոտ հանդիսանալով երեխաների ազատ տեղաշարժման համար: Այս հանգամանքով պայմանավորված դպրոցի տարածքում չկա ոչ մի ծառ: Անհրաժեշտ է ծառեր տնկել, որպեսզի ունենանք կանաչապատ տարածք շրջապատված եղևնիներով, մրգատու ծառերով, հատապտուղների տնկիներով:*

*Մյուս առավել թույլ կողմն է դպրոցի 2-րդ մասնաշենքը, որը չի գործում: Չկան պատուհանները և դռները: Կարիք կա հիմնանորոգման: Լքված այս մասնաշենքը եթե վերանորոգվի հետագայում այստեղ կգործեն առարկայական դասասենյակներ, լաբորատորիաներ, տեխնոլոգիայի դասասենյակ, արհեստանոցներ:*

*Թույլ կողմ է նաև դպրոցի նկուղը, որը առկա է ,սակայն չի օգտագործվում: Նորոգման կարիք կա: Եթե հնարավոր լինի նորոգել այն կծառայի և՛ ապաստարան ,և՛ հրաձգարան: Մեր օրերում հատկապես շատ կարևոր է գյուղական համայնքում ապաստարան ունենալը:*

## ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ , ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ-Ի ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Արդի ժամանակաշրջանը տեղեկատվության և գիտելիքների գերակայության դարաշրջան է, որն էլ պահանջում է դինամիկ փոփոխություններ ամենուր: Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան անհրաժեշտ է կրթական, հետազոտական, նախագծային աշխատանքներն ավելի արդյունավետ իրականացնելու, ինչպես նաև ՀՊՉ-ով նախատեսված կարողությունները և վերջնարդյունքները ապահովելու համար:

Նյութատեխնիկական բազան իրենից ներկայացնում է ուսուցման գործընթացին օժանդակող՝

- Շենք շինություններ և այլ ենթակառուցվածքներ
- Անհատական տեխնիկական միջոցներ
- Անհատական տեխնիկական սարքավորումներ
- Անհրաժեշտ գրենական պիտույքներ և հարմարանքներ
- Լաբորատոր գույք
- Դիդակտիկ պարագաներ և պաստառներ
- Համակարգչային տեխնիկա
- Աշակերտական և ուսուցչական գույք (սեղաններ, աթոռներ, պահարաններ)
- Կրթության գործընթացին օժանդակող այլ սարքավորումներ Նյութատեխնիկական բազան (բացի բյուջետային միջոցներից) հզորացնելու համար, անհրաժեշտ է փնտրել և գտնել բարերարներ, ովքեր պատրաստ կլինեն օժանդակել:

**Տեղեկատվական տեխնոլոգիաների արագընթաց զարգացման շրջանակներում անհնար է պատկերացնել դասապրոցեսն առանց ՏՀՏ–ների կիրառման, քանի որ անժխտելի կերպով ՏՀՏ–ների կիրառումը բերում է դասի արդյունավետության բարձրացմանը, ավելի մեծ պահանջարկ ունի աշակերտների շրջանում, թույլ է տալիս**

դուրս գալ դասի ավանդական ձևից, նոր մոտեցումներ և հնարքներ կիրառել միևնույն խնդրի լուծման վերաբերյալ: Ժամանակակից դպրոցում դասավանդող ուսուցիչը, նախ պետք է ինքը լիարժեք տիրապետի համակարգչին, իմանա տարբեր ծրագրեր, կարողանա օգտագործել դրանք դասի տարբեր փուլերին, կազմակերպի հետաքրքիր և ճանաչողական պրեզենտացիաներ, ապա այդ ամենը մատչելի փոխանցի դասարանին: Մենք մեր դպրոցում ՏՀՏ-ի մեծածավալ կիրառման խնդիր ունենք և ժամանակի ընթացքում փորձի փոխանակման, վերապատրաստման ինքնակրթության շնորհիվ կկարողանանք լուծել առկա խնդիրները և ՏՀՏ-ն դարձնել առավել կիրառելի և նպատակային:

*Նյութատեխնիկական բազան որքան հագեցած լինի այնքան կմեծանա երեխաների հետաքրքրությունը առարկաների հանդեպ: Սովորողների տեսողական ճանաչողական ընկալումը, դիտողականությունը ավելի կամրապնդվի եթե նրանք տեսնեն տարածական մարմինն իրականում ոչ թե՝ պրոեկցիան գրատախտակի վրա, եթե նրանք կատարեն փորձեր իրականում ոչ թե՝ ուղղակի կարդան դրա մասին:*

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| --- | --- |
| ԴՊՐՈՑՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ՝ | ԴՊՐՈՑՈՒՄ ՉԿԱՆ՝ |

Համակարգիչներ

Ինտերնետային կապ

Գեղարվեստական և ուսումնական գրականություն

Նախակրթարանի անհրաժեշտ պարագաներ

Սպորտային պարագաներ

Տպիչներ

Նվագարկիչ

DVD

Հեռուստացույց

Պրոեկտոր

Քարտեզներ, գլոբուսներ

ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ պարագաներ,

փորձաուսումնական սարքեր,

նյութեր, փորձարարական կոլբաներ,

կենսաբանության դիդակտիկ պարագաներ,

երկրաչափական մարմինների օրինակներ, պաստառներ,

երաժշտական գործիքներ,

տեխնոլոգիա առարկայի համար անհրաժեշտ սարքավորումներ և դետալներ

էլեկտրոնային գրատախտակ,

ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

*Պետական բյուջեից կայուն*

*փոխանցումներ պահանջված*　　　　　　　　*անկանխատեսելի ծախսեր,*

*ժամկետներում,*

*աշխատավարձի ժամանակային*

*փոխանցումներ,*

*հարկերի վճարում ըստ պահանջի,*

ԶԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության որակի բարձրացման նպատակով կրթության արդիականացման հայեցակարգում նշվում է կրթության անհատականության անհրաժեշտությունը՝ պետական կրթական չափորոշիչների ապահովմամբ՝ հիմնված կրթական հաստատությունների բազմազանության և ուսումնական ծրագրերի տարբերակայնության վրա: Կրթության ոլորտում բարեփոխումների ընդհանուր ուղղվածությունը պայմանավորում է ուսուցման կազմակերպման նոր համակարգերի ու մոտեցումների ներդրման անհրաժեշտություն թե՛ միջնակարգ հանրակրթական, թե՛ բարձրագույն ուսումնական համակարգերում: Ուսուցման ավանդական ձևերի կողքին կազմակերպվում են նորերը՝ արդիականները, որոնք առաջադրում են ուսուցման ժամանակակից ձևեր ու մեթոդներ: Ուսուցման գործընթացը երկկողմանի է, ուստի խիստ անհրաժեշտ է ապահովել սովորեցնողի (ուսուցչի) և սովորողի (աշակերտի) փոխկապակցված աշխատանքը: Ուսուցման մեթոդներն ընտրելիս պետք է հաշվի առնել սովորողների գիտելիքների մակարդակը, տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները: Սովորողը պետք է հստակ իմանա՝ ինչ է անում և ինչու, պետք է մշտապես տեղյակ լինի՝ ինչ է իրենից ակնկալվում, պետք է վստահ լինի, որ ուսուցիչը աջակցելու է, օգնելու է իրեն: Այսօր մենք կրթության որակի վերանայման խնդիր ունենք: Ցանկացած բարեփոխում այս ոլորտում կարող է դրականորեն անդրադառնալ մեր դպրոցի հետագա զարգացման վրա: Մենք պետք է ոչ միայն լինենք հետևողական, որպեսզի դպրոցում ՀՊՉ-ն կիրառվի, ապա պետք է ջանք ու եռանդ չխնայել ՀՊՉ-ի մասշտաբային ներդրման, գրագետ գործելաոճի, նպատակային աշխատանքի իրականացման համար: Եվ այստեղ անելիք ունի թե՛ դպրոցի տնօրենը, թե՛ դպրոցի ուսուցիչները և թե՛ կրթական ոլորտի ներկայացուցիչներն ընդհանրապես:

Արդի դարում ուսուցիչը խնդիր ունի ոչ թե աշակերտներին ընդհանուր տեղեկություններ տալ կյանքի տարբեր բնագավառների վերաբերյալ, այլ անձի գիտակցությունը նորովի ձևավորել, որը ենթադրում է որակապես նոր մոտեցումների ցուցաբերում: Կրթության որակի բարելավման կարևորագույն խնդիրներից մեկը ուսումնական նյութի կիրառական ուղղվածության ապահովումն է: Հանրակրթության գերակա նպատակը աշակերտների ինտելեկտուալ զարգացումն է, մտածողության այնպիսի որակների ձևավորումը, որոնք հատուկ են բարեկիրթ մարդու

գործունեությանը և անհրաժեշտ են մարդկանց հասարակության մեջ լիարժեք անդամ լինելու համար:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Ուսումնական հաստատությունում կրթական գործընթացը կազմակերպվում է ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան և հաստատության կողմից մշակված և հաստատված ուսպլանով:

Դպրոցն ապահովում է չափորոշչային պահանջները բոլորի համար հավասարապես հասանելի, նորարարական և որակյալ:

Դպրոցի առաքելությունն է՝ որակյալ կրթական միջավայրի ապահովում յուրաքանչյուր սովորողի կրթական պահանջներին համապատասխան, աշակերտները մշտապես

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

ոչ բոլոր ուսուցիչներն են կարողանում լիարժեքորեն և ազատ կիրառել նոր ՀՊՉ-ն, աշակերտները բավարար կերպով չեն տիրապետում ՏՀՏ-ից ճիշտ և գրագետ օգտվելու հմտությանը

մասնակցում են  տարբեր

մրցույթներին և օլիմպիադաների

## ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

## ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տնօրենն ու կառավարման խորհուրդը գտնվում են սերտ համագործակցության մեջ, ինչի շնորհիվ բարձրանում է կրթության որակը: Կառավարման խորհուրդը մշտապես հետաքրքրվում է դպրոցում առկա խնդիրներով և իր աջակցությունն է հայտնում տնօրենին:

**Կառավարման մարմնի և տնօրենի սերտ համագործակցության արդյունքում կունենանք առավել որակյալ կրթություն, մոտիվացված ուսուցիչներ, ուսումնական այլ միջավայր, իրականացված արտադպրոցական և արտադասարանային բազմաբնույթ աշխատանքներ՝ ինչը միանգամայն դրականորեն կանդրադառնա սովորողների մոտիվացիայի բարձրացման վրա:**

**Ուսումնական հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները ձևավորվում են օրենքով և ունեն դպրոցի կանոնադրությամբ իրենց վերապահված լիազորություններ, և կոչված են աջակցելու դպրոցին՝ գործել ի շահ երեխայի և պետության:**

Սվերդլովի միջնակարգ դպրոցը ունի միացյալ կառավարման խորհուրդ բաղկացած 14 անդամից: Ուսումնական հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները ձևավորվում են օրենքով և ունեն դպրոցի կանոնադրությամբ իրենց վերապահված լիազորություններ և կոչված են աջակցելու դպրոցին՝ գործել ի շահ երեխայի և պետության:

Տեղեկություն ՀՀ Լոռու մարզի Սվերդլովի միջնակարգ դպրոցի միացյալ կառավարման խորհրդի կազմի վերաբերյալ:

1. Ասուլյան Լուսինե Գառնիկի- բարձրագույն

2. Մուրադյան Արա Ցոլակի-բարձրագույն

3. Սարգսյան Սերինե Սերժիկի-միջնակարգ

4. Չերքեզյան Տաթնիկ Սարգսի- միջնակարգ

5. Զաքարյան Անահիտ Կոլյայի-բարձրագույն

6. Բարսեղյան Նարինա Շամիրի-բարձրագույն

7. Սերոբյան Անի Սամվելի- միջնակարգ

8. Բաղոյան Ֆլորա Ռուսլանի-միջնակարգ

9. Այվազյան Էդիկ Հրաչիկի-բարձրագույն

10. Զուլհակյան Սերգո Ռազմիկի-բարձրագույն

11. Հակոբյան Արծրուն Սամվելի-բարձրագույն

12. Անդրեասյան Նեկտարինա Հրաչիկի-միջն/մասն.

13. Առաքելյան Արփիկ Ժորիկի-բարձրագույն

14. Ավետյան Նարինե Սահակի-բարձրագույն

ՀՀ Լոռու մարզի Սվերդլովի միջնակարգ դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի կազմ

1. Ղուկասյան Արմեն –Տնօրեն- աշ.ստաժ 42
2. Այվազյան Ժիրիկ –Փոխտնօրեն-38
3. Մազթաղյան Աննա –ՄԿԱ գծով փոխտնօրեն-35
4. Անանյան Մարինե- Հայոց լեզու և գրականություն-38
5. Կարապետյան Անժելա- Ռուսաց լեզու-36
6. Գրիգորյան Գայանե- Ֆրանսերեն-31
7. Ասոյան Լուսինե-Պատմություն և հասարակագիտություն-19
8. Այվազյան Լուիզա- Աշխարհագրություն և հայ եկեղեցու պատմություն-17
9. Տոնոյան Անահիտ- Մաթեմատիկա-14
10. Ղուկասյան Նունե-Մաթեմատիկա-22
11. Այվազյան Անահիտ- ֆիզիկա, մաթեմատիկա, բնագիտություն-37

12. Սահակյան Ռաֆիկ-Քիմիա և կենսաբանություն-38
13. Մուրադյան Արա-Ֆիզկուլտուրա-26
14. Գևորգյան Մովսես-Ֆիզկուլտուրա-9
15. Մկրտչյան Արմեն- Ջինդեկ-37
16. Մամաջանյան Մերի-Դասվար-1
17. Հունանյան Նառա-Դասվար-11
18. Մարգարյան Թեյմինա-Դասվար-16
19. Շահինյան Մայրամ – Հայոց լեզու և գրականություն-5
20. Սաքուլյան Հասմիկ- Նախակրթարանի դաստիարակ-2
21. Հովասափյան Սերինե- Գրադարանավար-23
22. Դոլմազյան Սյուզաննա- Ուս. Օգնական-10
23. Գրիգորյան Անուշ- Դասվար-10
24. Սահակյան Անի-ԴԱԿ-13

Սվերդլովի միջնակարգ դպրոցի ծնողական խորհրդի կազմը

1. Շահինյան Մայրամ
2. Սուղյան Արնիկ
3. Հունանյան Նառա
4. Գևորգյան Նունե
5. Այվազյան Աննա
6. Բարսեղյան Արփիկ
7. Այվազյան Գոհար
8. Քարտաշյան Օֆելյա
9. Գազինյան Ամալյա
10. Այվազյան Սիրարփի
11. Սարգսյան Տաթևիկ
12. Մինասյան Իրինա

Աշակերտական խորհրդի կազմ

1. Այվազյան Անգելինա
2. Մովսեսյան Արամ
3. Գևորգյան Լիանա
4. Սահակյան Անուշ
5. Հովասափյան Անուշ
6. Սարգսյան Համլետ
7. Սահակյան Վահե

Մեթոդմիավորում

Մեթոդ միավորումների անդամներ

1. Ասուլյան Լուսինե
2. Այվազյան Անահիտ
3. Մարգարյան Թեյմինա

Դպրոցում գործում են հետևյալ մեթոդական միավորումները

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ

ՏԱՐՐԱԿԱՆ

## ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

*Կառավարման խորհուրդը գործում է իր լիազորությունների շրջանակներում, իրականացվում են միջոցառումներ, հանդիպումներ կառավարման խորհրդի, տնօրենի, դպրոցի աշխատակիցների մասնակցությամբ։ մանկավարժական խորհուրդը համալրված է փորձառու և երիտասարդ կադրերով, Դպրոցի աշակերտական խորհուրդը կազմավորվել է համաձայն գործող կարգի և իրականացնում է օրենքով և դպրոցի կանոնադրությամբ իրեն վերապահած գործառույթները։ Աշակերտական խորհուրդը ակտիվ մասնակցություն ունի դպրոցական կյանքին, դպրոցի տնօրինության հետ հանդիպում –քննարկումներին*

## ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

*Ծնողական խորհուրդը կազմված է բացառապես մայրերից, Կառավարման և խորհրդակցական մարմինների համագործակցությունը ոչ բավարար է։*

*ներկայանում է*

*առաջարկություններով:*

## ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Սվերդլովի միջնակարգ դպրոցը մշտապես համագործակցում է համայնքի, շահառու կազմակերպությունների, կրթության ոլորտի կառավարման մարմինների հետ: Դպրոցը համագործակցում է Լոռու մարզպետարանի, ԿԳՄՍ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿԻ-ի, ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, ՀՀ պաշտպանության նախարարության և Լոռի բերդ խոշորացված համայնքի հետ։

Դպրոցում կազմակերպված միջոցառումներին ներկա են լինում համայնքի ներկայացուցիչները: Ամեն տարի կազմակերպվող շաբաթօրյակին և ծառատունկին սովորողները և աշխատակիցները ակտիվ մասնակցություն են ունեցել համայնքում կազմակերպված աշխատանքներին: Պարբերաբար հանդիպումներ ենք ունեցել համայնքի ղեկավարի, համայնքի ներկայացուցիչների, սովորողների ծնողների հետ: Ուշադրության կենտրոնում են եղել հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաների, կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող երեխաների ընտանիքները ինչպես նաև բազմազավակ և կարիքավոր ընտանիքները:

Որպես ակտիվ համայնքի ներկայացուցիչ ես նս իմ մասնակցությունն եմ ունենում համայնքի և դպրոցի համագործակցության ամրապնդմանը:

Մասնակցել եմ Լոռի Բերդ խոշորացված համայնքի կողմից կազմակերպված «Ներառումը սկսվում է համայնքից» ծրագրին: Ծրագրի արդյունքում մեր համայնքում գործեց փոքրիկ զբաղվածության կենտրոն, որտեղ այցելում են մինչև 12 տարեկան երեխաները: Որպես կամավոր և կենտրոնի պատասխանատու իմ փորձը ներդրել եմ երեխաների հետ աշխատելով, հաղորդակից լինելով նրանց խնդիրներին և կարիքներին:



# ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Տրվում է

## ՍՅՈՒԶԱՆՆԱ ԴՈՒՄԱՋՅԱՆԻՆ

առ այն, որ նա մասնակցել է
*«Ներառումը սկսվում է համայնքից»* ծրագրի
**«Աշխատանք հատուկ կարիքներով երեխաների հետ, նրանց ներառումը հասարակությունում»**
թեմայով երկօրյա դասընթացին:

«ԱՌԱՋԸՆԹԱՑ»

Հայկական Կարիտաս
Armenian Caritas

«Առաջընթաց» ՀԿ
նախագահ՝
Կամո Եգանյան

Լոռի Բերդ խոշորացված
համայնքի ղեկավար՝
Արայիկ Ներսիսյան

24 նոյեմբեր 2020թ.





## ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Շատ կարևոր է հաստատության ուսումնական միջավայրը և մեր նպատակներից մեկն է ցանկալի ուսումնական միջավայր ստեղծելը: Ուստի անհրաժեշտ է հստակ սահմանել ուժեղ և թույլ կողմերը, որպեսզի կարողանալ ձևակերպել համապատասխան գործողություններ, որոնք ուղղված կլինեն ուսումնական միջավայրի բարելավմանը:

Սոցիալ–մշակութային միջավայրով է պայմանավորված հասարակության մեջ ապրող մարդու վարքագծի օրենքներն ու չափանիշերը, արժեքային կողմնորոշումներն ու դրույթները: Միջավայրի կառուցվածքն ընդգրկում է անձի կապերն ու հարաբերությունները, գործունեության տեսակներն ու շփման ձևեր, այդ պատճառով էլ սոցիալ–մշակութային միջավայրը կարող է ներկայացվել մի կողմից՝ մարդու գործունեության տեսակների համակարգի միջոցով, իսկ մյուս կողմից՝ փոքր սոցիալական խմբի, որպես ամբողջական շարք, որի շրջանակում մարդիկ միավորված են ընդհանուր նպատակներով, հետաքրքրություններով, ճանաչում են մեկը մյուսին և միշտ շփվում են միմյանց հետ: Սոցիալ–մշակութային միջավայրի այդպիսի կառուցվածքային վերլուծության կարևորությունը պայմանավորված է նրանով, որ այն հնարավորություն է տալիս առավել լիարժեք բացատրել անհատի զարգացման մեջ այդ բաղադրիչների դերը:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| *Դպրոցն իրականացնում է տարրական, հիմնական հանրակրթական ծրագրեր, դպրոցում ձևավորվել է առողջ և բարոյահոգեբանական բավարար միջավայր,* | *հաստատությունը չունի ընթերցասրահ, գույքն ու նյութատեխնիկական բազան գտնվում են ոչ բավարար վիճակում և քանակությամբ,* |

*ԿԱՊԿՈՒ երեխաները մեկուսացված չեն,*

*հաստատությունն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին,*

*հանդուրժողականությանը նվիրված և*

*նման այլ ուսումնական ծրագրեր,*

*Դպրոցում կա սննդի կետ,*

*առկա է գրադարան,*

*հաստատությունը չունի ռեսուրս սենյակ ԿԱՊԿՈՒ երեխաների համար,*

## ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական գործունեության ընթացքում ինձ համար կարևոր է եղել յուրաքանչյուր սովորողի համար հավասար պայմաններ ստեղծելը, նրանց կարիքներին և առանձնահատկություններին համապատասխան: Հանդիպել եմ բազմաթիվ դժվարությունների ԿԱՊԿՈՒ երեխաների կարիքի գնահատման գործընթացում՝ նրանց ծնողների ոչ լիարժեք պատկերացում ունենալու պատճառով: Գյուղական համայնքում, երբ բոլորը ճանաչում են միմյանց, շատ ավելի դժվար է կոտրել առկա կարծրատիպային մտածելակերպը ներառական կրթության մասին: Շրջապատի կարծիքը հաճախ ավելի է ազդում ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների հոգեբանության վրա: ԿԱՊԿՈՒ երեխաների տարիքային առանձնահատկությունների հետ փոխվում է նրանց խնդիրներն ու պահանջմունքները: Ուստի պետք է աջակցությունը ընտանիքներին համատեղ աշխատանքների միջոցով լինի շարունակական: Շարունակվելու է համագործակցությունը դպրոցի հոգեբանի և մանկավարժների հետ, մշակվելու են նոր ռազմավարություններ, միջավայրային պայմանների բարելավումը և խելամիտ հարմարեցումների ապահովումը նոր հնարավորություններ կստեղծեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը ապահովելու գործընթացում:

2023թ. մասնակցել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացվող «Տարվա լավագույնները» Հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագիր մրցույթին:

Ծրագիրն ուղղված է եղել ներառական կրթության վերաբերյալ առկա կարծրատիպերի հաղթահարմանը գյուղական համայնքի դպրոցում, ներառական կրթության մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ գործընթացների պլանավորմանը և այդ գործընթացում թիմային մասնակցության գործողությունների մշակման ամրապնդմանը:

**Նպատակը՝**

- Մեր գործունեությունն ուղղված է ծնողների սոցիալական հմտությունների և կարողությունների ձեռք բերմանը:
- Աջակցել ծնողներին հասարակության մեջ ԿԱՊԿՈՒ երեխաներինին ինտեգրելու կրթության և դաստիարակության դժվարությունները հաղթահարելու հարցերում:
- Ծնողների հետ ստեղծել կառուցողական, փոխգործակցային հարաբերություններ:
- Ցուցաբերել հոգեբանամանկավարժական աջակցություն:

**Խնդիրները՝**

- Բացահայտել ԿԱՊԿՈՒ երեխաների հարմարման և դպրոցական միջավայրում ինտեգրվելու դժվարությունները ծնողների մասնակցությամբ:
- Գտնել ծնողներին հոգեբանական և տեղեկատվական աջակցություն ցույց տալու արդյունավետ միջոցները:
- Համալիր ծառայությունների (ուսուցչի օգնական-ուսուցիչ-հոգեբան-ծնող) միջոցով նպաստել երեխաների՝ հետագա խոչընդոտներից կողմնորոշվելու կարողության ձևավորմանը :

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

*Դպրոցն իրականացնում է*

*ներառական կրթություն,*

*աշակերտները հարգում և սիրում են*

*իրենցից տարբերվող երեխաներին*

*և աջակցում են նրանց, և սա , թերևս,*

*մանկավարժների շնորհիվ է նույնպես,*

*ովքեր ջանք ու եռանդ չեն խնայում*

*բոլորին հավասարապես կրթելու*

*համար,*

*ԿԱՊԿՈՒ երեխաներն ունեն լիարժեք*

*մասնակցություն դպրոցական կյանքին:*

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

*դպրոցում առկա չեն բավարար*

*հարմարություններ ԿԱՊԿՈՒ*

*երեխաների համար,*

*մասնավորապես թեքահարթակ,*

*որոշ ծնողներ չեն ցանկանում,*

*որպեսզի իրենց երեխաները*

*գնահատվեն*

*և այդ ուղղությամբ տարվում են*

*աշխատանքներ ,*

## ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱԼԱԾԱՆՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

*Դպրոցը զերծ է հալածանքի,*

*Օտարման և բռնության տարրերից:*

*Իրականացվում են միջոցառումներ*

*բուլինգի բոլոր տեսակների*

*դրսևորումների բացառման*

*նպատակով,*

### ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

*բուլինգի տեսակների*

*բացառմանն ուղղված ոչ*

*բավարար իրազեկվածություն,*

*բուլինգի վերաբերյալ որոշ*

*ծնողների ոչ բավարար*

*պատկերացումներ,*

*Խոցելի խմբում գտնվող*

*Երեխաներ պաշտպանությանն*

*Ուղղված ոչ անհրաժեշտ*

*մեխանիզմներ.*

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

*Սվերդլովի միջնակարգ դպրոցում աշխատում է 24 մանկավարժ, 20 դասավանդող ուսուցիչ, 1 ուսուցչի օգնական, համատեղությամբ աշխատող 1 ուսուցիչ: Մանկավարժական համակազմի անդամներն ունեն համապատասխան բարձրագույն կրթություն: Ուսուցիչները փորձառու են և հմուտ իրենց աշխատանքում: Երիտասարդները իրենց գործում արհեստավարժ են: Մասնագիտական մեծ փորձ ունեցող ուսուցիչները օգնում են երիտասարդներին առաջարկություններ ներկայացնելով, փորձի փոխանակում և մասնագիտական կարիքների գնահատում իրականացնելով ինչը փոխհամագործակցություն է ուսուցիչների միջև: Ուսուցիչները պարբերաբար մասնակցում են մասնագիտական վերապատրաստումների հերթական ատեստավորման, նոր ՀՊՉ- ի դրույթների վերաբերյալ վերապատրաստումների, ՏՀՏ-ների կիրառման դասընթացների:*

***Ուսուցչի մոդելը դպրոցում ,թերևս, ամենից կարևոր երևույթն է, հենց նրանից է կախված , թե որքանով մոտիվացված կլինեն սովորողները, կհաճախեն դպրոց սիրով, թե՞ միայն այն պատճառով , որ այդպես է պետք: Չենք կարող առարկել, որ ուսուցչի գործունեությունը բարդ է և աշխատատար: Ուսուցչի մասին խոսելիս սովորաբար կարևորվում է նրա դերը հասարակության մեջ բարեփոխումներ իրականացնելու, մարդասիրական արժեքներ կրելու և դրանք սովորողներին փոխանցելու տեսանկյունից:***

***Մասնագիտական գրականության մեջ հաճախ է նշվում ուսուցչի անձնային, մասնագիտական որակների կարևորությունը: Հատկապես ընդգծվում են դասավանդվող առարկայի և երեխաների հոգեբանական առանձնահատկությունների իմացությունը, դասավանդման արվեստը և մանկավարժական տակտը, ուսուցչի անձնային բարոյական, կամային որակները, ինչպիսիք են զուսպ, ազնիվ, ուշադիր լինելը, բարեխղճությունը, նրբանկատությունը, երեխաների նկատմամբ ունեցած սերը:***

Ըստ ժամանակակից մանկավարժական մոտեցումների՝ ուսուցչին ներկայացվող պահանջների մեջ կարող է հանդիպել այսպիսի բնորոշումների.

● որոշում կայացնող,

● ուսուցմանն աջակցող

● ուսուցման գործընթացին հետևող,

● ուսուցման ընթացքը գնահատող,

● անձնական օրինակ ծառայող:

Ուսուցչի մասնագիտական որակները բնորոշվում են նաև այլ տեսանկյունից՝

● Արդարացի և անաչառ լինելը: Իր գործունեության ընթացքում ուսուցիչը պարբերաբար գնահատում է աշակերտներին և գնահատելիս ուսուցչի արդարացի լինելը ունի նաև դաստիարակչական նշանակություն:

● Պահանջկոտությունը, որը դրսևորվում է և՛ իր, և՛ իր աշակերտների նկատմամբ:

● Հումորի զգացումը: Իզուր չի ասվում, որ ուրախ և աշխույժ ուսուցիչն ավելի լավ է ուսուցանում, քան մռայլ ուսուցիչը: Հումորի զգացում ունեցող ուսուցիչը դասարանում ստեղծում է անմիջական, անկաշկանդ և բարյացակամ մթնոլորտ:

● Մանկավարժական տակտը: Այն աշակերտների նկատմամբ բարեկիրթ, չափավոր վերաբերմունքի դրսևորումն է, որի հիմնաքարը աշակերտի անձի նկատմամբ ունեցած հարգանքն է:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ նշվում է նաև ուսուցչին ներկայացվող մի շարք պահանջներ, ըստ որի ուսուցիչը պետք է՝

● ունենա աշխարհայացքային կողմնորոշում և հոգևոր բարձր արժեքներ.

- աշակերտի մեջ ձևավորի ամբողջ կյանքի ընթացքում սովորելու անհրաժեշտության

գիտակցումը.

- *գիտակցի, որ ինքը դպրոցի անբաժան մասն է.*
- *ունենա անձնական պատասխանատվության զգացում.*
- *ունակ լինի մարդկանց մեջ տեսնելու անհատին.*
- *ունենա հաղորդակցման հմտություն.*
- *ցուցաբերի համագործակցային մոտեցում.*
- *ունենա ղեկավարման հմտություններ.*
- *տիրապետի տեղեկատվական տեխնոլոգիաներին և դրանք օգտագործի դասապրոցեսի արդյունավետության բարձրացման նպատակով:*

## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ , ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

